№ 71 Ապրիլի 23 (Մայիսի 5) 1881 Ապրիլի 23 (Մայիսի 5) № 71

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ղզլարից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ազատ մտածողների ժողովը Գերմանիայում։ Թիւրքիայի հայ-կաթոլիկները։ Յունաստան։ Նամակ Թիւրքիայից։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

Ապրիլի 15-ին

Մեր օրիորդական դպրոցը չունենալով մինչև այժմ սեպհական տուն, հարկադրված էր տեղաւորվել վարձով զանազան անյարմար բնակարաններում, որոնք գլխաւորապէս խանգարում էին այս դպրոցի յառաջադիմութեանը։ Մեր հոգաբարձուները վաղուց արդէն զգում էին այդ անյարմարութիւնը և քանիցս անգամ դիմեցին ժողովրդին որ նա մի տուն գնի կամ չինի. բայց ժողովրդի բարձր դասակարգը թէպէտ շատ անգամ ժողովվեցան այս առիթով, բայց ոչինչ չը չինեցին։ Վերջապէս դուրս եկաւ մի մշակ մարդ և նուիրեց օրիորդական դպրոցի շինութեան համար 6000 ռուբլ և խոստացաւ պակասորդը լրացնել։ Այս պարոնը Գրիգոր Աբրահամեանցն է. գործը գործը չատ մեծ է, որովհետև սա անկիրթ գոլով հասկացել է մեր ուսումնարանի դրութիւնը՝ Տայ Աստուած, որ սուելի կրթված աղաները հետեւեն գորա օրինակին և անտարբեր չը մնան դէպի մեր ազգային ուսումնարանները, որոնք չը-նորհիւ մեր հոգաբարձուների և ուսուցչիցների, չատ լաւ դրութեան մէջ են։ Ի պատիւ մեր հոգաբարձուների պէտք է ասել, որ բոլոր ուսումնական մասը դպրոցի գտնվում է մանկավարժական ժողովի ձեռքին, որի եռանդոտ անդամների թըւում գտնվում են և հոգաբարձուներ. այժմ մեր մանկավարժական ժողովները հոգաբարձու պ. Թանդոյեանի առաջարկութեամբ զբաղված են ուսումնարանների ծրագրի վերաքննութեամբ, որի մէջ մի քանի անյարմարութիւններ կան. այս ծրագիրը մտադրութիւն կայ ներկայացնել գալ ուսուցչական ժողովին։

Կիլի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Новости» լրագիրը հաղորդում է որ Թագաւորական Կիրալչիչի հայրը, սուրբ Տրիֆոնի եկեղեցու քահանան, այս օրերս խեղդվեցաւ։

Նոյն լրագիրը հաղորդում է որպէս լուր, որ համալսարանի ուսանողներին կրկին կը տրվին համազգեստներ, ինչպէս Նիկոլայ կայսրի ժամանակ։

«Russische Corresp.» լրագիրը ասում է որ մարտի 1-ին Թագաւորի դէմ երկրորդ ռումբ գցողը, որով և պատճառվեցան մահացու վէրքեր հանդուցեալ Թագաւորին, նախկին ուսանող էր հանքաբանական դպրոցի, Կրիպովէցկի ազգանունով։ Յայտնի է որ ռումբ գցողը ինքն էլ սպանվեցաւ ռումբի ճայթիւնից։

Ս. Պետերբուրգի պօլիցէյմէյստէր գնդապետ Դվօրժիցկուն, որ ծանր վէրքեր ստացաւ մարտի 1-ի եղեռնագործութեան ժամանակ, շնորհվեցաւ գեներալ-մայորի աստիճան 5000 ռուբլ տարեկան ռոճիկով։

«Порядокъ» լրագիրը լսել է որ զինուորական բժշկների ռոճիկները աւելացրած կը լինեն։

«Сибирская газета» լրագիրը տպել է «Ссылка въ Сибирь» վերնագրով յօդուածը, որի մէջ գըտնում ենք հետեւեալ թւանշանները Սիբիրի մէջ աքսորվածների մասին։ Տիւմէնի կենտրօնական բանտից մինչև Տօմսկ տեղափոխված են 1877 թվին 10,592 կալանաւորվածներ, 1878 թ. 10,460 կալանաւորվածներ, 1879 թ. 10,549 և 1880 թ. 10,277 կալանաւորվածներ։ Տիւմէնի կենտրօնական բանտը 1879 թվին հասցրած են 18,255 հոգի կալանաւորվածներ, որոնց թւում դատարանով դատապարտվածներ 6145 մարդիկ և 400 կանայք, վարչութեան կարգադրութեամբ աքսորվածներ 5,493 մարդիկ և 230 կանայք, բացի սորանից աքսորվածների հետ իրանց կամքով եկածներ 1827 մարդիկ և 4160 կանայք։ Տիւմենից մինչև Իրկուտսկ ուղարկվող կալանաւորվածներից գրեթէ կէսը ամեն տարի հիւանդանում են ճանապարհի վրա այլ և այլ տարափոխիկ հիւանդութիւններով։ Նրանցից տարեկան մինչև հազար հոգի մեռնում են։ Նրանց միջոցով իւրաքանչիւր տարի տարածվում են Սիբիրի բընիկ ժողովրդի և պահապան զօրքի մէջ այլ և այլ տարափոխիկ ախտեր, ինչպէս տիֆ, ջերմ և տենդ։

«Русскій Курьеръ» լրագիրը հաղորդում է որ Ս. Պետերբուրգի քաղաքապետի նախագահութեամբ կազմված է մի յանձնաժողով, որի անդամներն են Լամանսկի, Կօրէկօ, Լիխաչեվ, Պոտէխին և Կվիստ և որի պաշտօնը պէտք է լինի որոնել և գտնել միջոցներ, դէպի թագաւորական տեղերը տանող երկաթուղիների գծերը ամեն վտանգներից ազատ դարձնելու համար։ Ապրիլի 11-ին յանձնաժողովը հետազօտեց Բալտեան երկաթուղու գիծը՝ մինչև Գատչինօ, այս օրերս պիտի հետազօտի Վարշավեան երկաթուղին մինչև Գատչինօ և Բալտեան երկաթուղին մինչև Պետերգոֆ։

Արմաւիրից, Յարութիւն քահանայ Խաչերեանից ստացանք 20 ռուբլ յօգուտ Հայաստանի սովեալների, որ մի երիտասարդ Գասպար անունով յանձնել էր տէր հօրը, մեր խմբագրութեանը հասցնելու համար։

Վանքի մայր-եկեղեցու աւագ քահանայ տէր-Յովհաննէս Սարգսեան մինչև այժմ ներում չէ ստանում էջմիածնից իր անյայտ յանցանքների համար։ Դա բոլորովին նոր բան է պատժել մի մարդուն մի չեղած յանցանքի համար։ Քանի մի ամիս է տէր-Յովհաննէսի ծուխը խնդիրք է ուղարկել Էջմիածին, ներումն խնդրելով ծերունի աւագ քահանայի համար իր չը գործած յանցանքի համար։ Բայց Էջմիածինը անողոք մնաց այդ դարդակ խնդիրքի առջև։ Մթթէ Թիֆլիսի անուանի մարդիկ և հարուստներ, որոնցից բաղկացած է տէր-Յովհաննէսի ծուխը, դեռ այնքան միամիտ են, որ կարծում են թէ Էջմիածնի վրա կարելի է ներգործել մի խնդիրքով առանց չափելի մի առարկայի։ Եթէ խնդիրքը ուղարկվեր գումարով հանդերձ,—այդ ուրիշ բան կը լիներ և ծերունի աւագ քահանան իսկոյն ներումն կը ստանար իր յանցանքի համար։ Իսկ նրա յանդուգն յանցանքը նոյն իսկ դրա մէջն է պարունակվում, որ Էջմիածինը հաւատացած է թէ նա փող ունի և կաշառք չէ կամենում տալ ում հարկն է։ Խորհուրդ ենք տալիս տէր-Յովհաննէսի ծխականներին ստորագրութեամբ հաւաքել մի գումար և առանց խնդիրքի ուղարկել Էջմիածին,—կարող ենք հաւատացնել որ իսկոյն կը ներգործի։ Գումարի քանակութեանը նայելով կարելի է տէր-Յովհաննէսին ոչ թէ միայն աւագ քահանայութիւնը վերադարձնել, բայց նրա համար ճարել եպիսկոպոսի աստիճանն էլ։ Էջմիածնում այս բոպէիս ամեն բան ծախվում է։ Մոռացանք ասել, որ ուղարկվելու գումարի մի փոքրիկ մաս անհրաժեշտ է թողնել, որպէս յիշատակ, Մամբրէի մօտ, իսկ մեծ մասը պէտք է ուղարկել Մանկունու անունով։

Մեզ ուղարկել են հետեւեալ նկատողութիւնը տպելու համար։ «Լսում ենք որ հայոց թատրոնական մանաժողովի նախագահ իշխան Ամատունին ամսիս 17-ին թատրոնական ընկերութեան հինգերորդներին ընդհանուր ժողով է հրաւիրել, ներկայացնելու նրանց վճռին մանաժողովի մի առաջարկութիւն, այն է թէ դերասանները ստանային իրանց ռոճիկը գոնէ երկու չաբաթվայ համար, այն ժամանակամիջոցից,

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

Ե.

Առաւօտ էր, վաղորդեան այն ժամը, երբ մութը դեռ չէր բաժանվել լոյսից։ Ցաթեի վանքի առաջնորդարանի դուռը կամայ բացվեցաւ. մի բարձրահասակ արեղայ յայտնվեցաւ շէմքի վրա։ Նա աչք ածեց իր շուրջը, ոչ ոք չէր երևում։ Ամբողջ միաբանութիւնը դեռ քնած էր։ Վեղարը աւելի ցած թողնելով աչքերի վրա, նա սկսեց դիմել դէպի վանքի շրջապարիսպի մեծ դուռը։ Դռնապանը փաթաթված իր վերարկուի մէջ, նոյնպէս քնած էր։ Չը զարթեցնելով նրան, արեղան հանեց իր գրպանից մի բանալի, բաց արեց ահագին երկաթէ կողպէքը, որ քարշ էր ընկած նոյնպէս երկաթէ սողնակից։ Երկփեղկեայ մեծ դուռը նրա ոտքի մի հարուածով յետ-յետ գնաց։ Նա դուրս եկաւ և իր ետեից կրկին կողպեց դուռը։

Վաղորդեան լռութիւնը սքանչելի էր. ամեն ինչ չորս կողմում դեռ նիրհում էր քաղցր, խաղաղ անդորրութեան մէջ։ Նա աչքերը դարձրեց դէպի արևելք, տեսնելու, արդեօք չատ էր մնացել մինչև արևի ծագելը։ Արշալոյսը դեռ նոր էր սկսել պարզվել։ Յետոյ դիմեց նա դէպի վանքի մերձակայ բլուրներից մէկը, բարձրացաւ նրա գագաթի վրա։ Այստեղից սկսեց նայել դէպի նեղ ճանապարհը, որ ոլոր-մոլոր պտոյտներով բարձրանում էր դէպի վանքի դառիվերը։ Ոչ ոք չէր երևում։ Իսկ նա արձանի պէս կանգնած, երկար նայում էր։ Վաղորդեան մառայը թոյլ չէր տալիս խիստ հեռուն նշմարել. նա այժմ լարեց իր լսողութեան բոլոր ուժը։ Արդեօք չէր լսվում մի որ և իցէ ոտնաձայն, արդեօք ճանապարհի վրա ոչ ոք չէր գալիս։

Դա մի բարձրահասակ արեղայ էր, որի փառաւոր սև մօրուքի մէջ դեռ նոր երևում էին հատ-հատ սպիտակ մազեր։ Նրա նոյնպէս սև և խոշոր աչքերը դեռ պահպանել էին երիտասարդական փայլը։ Փոքր ինչ թուխ դէմքը արտայայտում էր տաք, եռանդոտ, անվեհեր բնաւորութիւն։ Իսկ այժմ նրա կրակոտ աչքերում կարելի էր նկատել սաստիկ անհանգստութիւն, որ աւելի բարկութեան նշան էր, քան թէ յուսահատութեան։ «Ի՞նչ եղան... հիմա պէտք է եկած լինէին... ինչու ուշացան»... կրկնում էր իր մտքում անհամբերութեամբ։

Երկար սպասելուց յետոյ, երբ նկատեց, ոչ ոք չէ երևում, ցած իջաւ բլուրից և վերադարձաւ վանքը։ Այժմ միայն նա զարթեցրեց դռնապանին, պատուիրելով.

—Արթուն եղիր, երբ դուռն ձայնը կը լսես, չուտ բաց արա ու ինձ խսկոյն իմացուցա տուր։

—Ե՞րբ էք տեսել, սրբազան, որ Օհանը քնի, ասաց նա աչքերը արորելով, - Օհանը միշտ մի աչքը խուլի միւսը բաց է քնում. ճանճն էլ անցնելիս իսկոյն զարթնում է։

Սրբազանը միայն ժպտաց ծերունի դռնապանի ինքնագովութեան վրա և հեռացաւ, կրկին պատուիրելով, որ արթուն կենայ։

Մտնելով իր խուցը, նա մօտեցաւ ճրագին, չարունակեց գրել նամակը, որ դեռ չէր վերջացրել։ Նրա ուրախ դէմքի վրա կարելի էր կարդալ բոլորը, թէ ինչ է գրում։ Մերթ-մերթ մի ինքնաբաւական ժպիտ ցնցում էր նրա փոքր ինչ ուռած շրթունքը և աչքերի մէջ փայլում էր խիստ վսեմ, խորհրդաւոր բերկրութիւն։ Կարծես նրա հոգին թափում էր իր բոլոր սրբազան ըզգացմունքները այն թղթի մէջ, որի վրա վազում էր նրա գրիչը։

Մէկ ժամից յետոյ լսելի եղան վանքի զանգակների մեղմ հնչիւնները։ Հրաւիրում էին մեներակացներին կատարելու առաւօտեան ժամերգութիւնը։ Նա չը շարժվեցաւ իր տեղից. դեռ գրում էր։ Ամբողջ միաբանութիւնը զարթնեցաւ։ Նրանք մինը միւսի ետեից դուրս եկան իրանց նեղ խցերից, և լուռ, դանդաղ քայլերով սկսեցին դիմել դէպի Աստուծոյ տաճարը աղօթելու։

Այդ միջոցին Օհանը բաց արեց սրբազանի խցի դուռը, յայտնեց, թէ վանքի ջորիները վերադարձան, որտեղ է հրամայում դարսել բեռները։

Սրբազանի սպասածն էլ հէնց այդ էր. նա խսկոյն նամակը թողեց և դուրս եկաւ։ Արշալոյսը արդէն սկսել էր շառագունել, բայց դեռ բաւական մութն էր։ Մի խումբ բեռնած ջորիներ վանքի մեծ դռնից մտան բակը։ Ջորեպանները տեսնելով սրբազանին, գդակները վեր առին, մօտեցան, համբուրեցին նրա աջը։

Նա դարձաւ դէպի նրանցից մէկը, որի ծպտեալ հագուստը ամենևին չէր ցոյց տալիս թէ աբեղայ է, հարցրեց.

—Խորէն հայր սուրբ, ինչու այդչափ ուշացաք։

—Ուշացանք, իրաւ է, պատասխանեց Խորէն հայր սուրբը ուրախ ծիծաղով.—բայց լաւ բեռնով ու բարձով յետ դարձանք... Ոչ մի տարի այսքան առատ «պտուղ» հաւաքած չունէինք... Ինչ ասես, բերել եմ՝—իւղ, պանիր, չորաթան, բուրդ, բամբակ,—ինչ որ ուզէք...

—Օրհնեալ լինի ժողովուրդը, նա իր տուրքը երբէք չի խնայել մեր վանքից, երբ ունեցել է, տուել է, ասաց սրբազանը ժպտելով, և հրամայեց բեռները ցած իջեցնեն։

Ջորեպանները կատարեցին նրա հրամանը և սկսեցին բեռները կրել ոչ թէ վանքի ամբարը, այլ սովորաբար պահվում էին վիճակներից հաւաքված իւղը, պանիրը և այլ «պտուղները»—այլ տարան դարսեցին մի ստորերկրեայ մառանում, որի դուռը սրբազանը իր ձեռքով բաց արեց։

—Ես կարծում եմ, այժմ մի ամբողջ տարվայ համար պաշար կունենանք... ասաց Խորէն հայր սուրբը, մի առանձին հրճուանքով նայելով այնտեղ դիզված մթերքների վրա։

—Ով գիտէ, եթէ սպառողները չատ կը լինեն, գուցէ այդ չի բաւականանայ... պատասխանեց սրբազանը և խորհրդաւոր ժպիտը դարձեալ երևաց նրա հմակրական դէմքի վրա։

Երբ բոլոր բեռները ներս բերեցին, սրբազանը հրամայեց ջորեպաններին, որ տանեն անասունները հանգստացնեն։ Նրանք հեռացան։ Իսկ ինքը մօտեցաւ, սկսեց նոր բերված հակերից մէկը բաց անել, ասելով.

—Ցեսնենք, Խորէն հայր սուրբ, ձեր այս անդամ բերած իւղն ու պանիրը ինչ համ ունի։

—Շատ համեղ է, սրբազան, պատասխանեց Խորէն հայր սուրբը և սկսեց օգնել սրբազանին հակը բաց անելու։

Հակի մէջ յայտնվեցաւ ոչ իւղ, ոչ պանիր և ոչ ուրիշ ուտեստներ, այլ դրանց փոխարէն առատ վառօդ և գնդակ, որ լցրած էին կաշեայ պարկերի մէջ։ Սրբազանը մեծ բաւականու-

որքան փակված էր թատրոնը սուզի պատճառով։ Իշխան Ամատունու դերասանների հետ կապված պայմանին համաձայն, վերջինները պէտք է զրկված լինէին իրանց ռոճիկից և այդ պատճառով Իշխանը յայտնել է որ թէև մանաժողովը 3,000 բուբլ զուտ արդիւնք ունի, բայց ինքն չէ վստահանում առաջարկած ծախսի, 750 բուբլու խնդիրը ինքնակամ լուծել, առանց ընդհանուր ժողովի կանխագոյն համաձայնութեան, որպէս զի չը խախտի դերասանների հետ կապած պայմանագիրը։ Ընդհանուր ժողովը վճռեց տալ յիշեալ ռոճիկները դերասաններին։ Բայց մենք կը կամենայինք մի քանի հարցեր առաջարկել։ Կարելի է արդեօք վերայիշեալ 3000 բուբլ այժմից իսկ զուտ արդիւնք համարել, քանի որ թատրոնական ներկայացումները դեռ շարունակվում են և դեռ ևս յայտնի չէ թէ ինչ դրութեան մէջ կը լինի թատրոնական գանձը ներկայացումների շրջանի վերջը։ Յիշեալ գումարը ինչ հիման վրա անուանվում է զուտ արդիւնք, երբ նոյն իսկ այդ գումարը յայտնի ապացոյց է թատրոնական մայր գումարի նուազման, որը հասնում էր 6000 բուբլու։ Մանաժողովը հրաւիրում է ընդհանուր ժողով այնպիսի հարցի վերաբերութեամբ, որի վճռելը հիմնադիրներից տուած հրահանգի զօրութեամբ լիապէս կախված է նոյն իսկ մանաժողովից, այն ինչ 1880 թուի յունիս ամսին, անցեալ թատրոնական շրջանի հաշիւը ընդհանուր ժողովին ներկայացնելու համար ընդհանուր ժողովը չը հրաւիրվեցաւ։ Մանաժողովը վազուց է արդէն պարտաւոր էր հրաւիրել ընդհանուր ժողով մանաժողովի հրաժարված անդամների փոխարէն նորերը ընտրելու,— այս ևս նա չը բարեհաճեց կատարելու։ Մանաժողովը պարտական էր հրաւիրել ընդհանուր ժողով մեծ պասի առաջին հինգշաբթի օրը, հիմնադիրներից տուած հրահանգներին համեմատ,— և այս էլ չը կատարեց մանաժողովը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

—

Մօտ ժամանակներս Ֆրանկֆուրտ (Մայնի-վրա) քաղաքում մէկ ժողով տեղի ունեցաւ այսպէս անուանված ազատ մտածողների։ Այդ ժողովը, որին մասնակցում էին ամբողջ Գերմանիայի ներկայացուցիչները, նպատակ ունի հիմնել մի ընկերութիւն ազատ մտածողներից։ Ժողովի նախագահ դոկտոր Բիւխներ, նիստի սկզբին մի համառոտ տեղեկութիւն տուեց այն հետևանքների մասին, որոնց հասել է այդ ընկերութիւնը։ մօտ 800 մարդ առաջարկել են անդամ գրվել այդ ընկերութեան։ Ահա՛ ընկերութեան կանոնադրութեան գլխաւոր սկզբունքները. միացնել այն բոլոր ցիրուցան եղած ոյժերը ազատ մտածողների Գերմանիայում և Աւստրիայում, որոնք միանալով կը կամենային համերաշխ կերպով գործել մարդկութիւնը բոլոր նախապաշարմունքներից ու սխալմունքներից ազատելու համար. գլխաւորապէս աշխատել համոզմունքի ու խղճի ազատութեան դաղափարը տարածելու համար։ Այդ ընկերութեան հիմնադիրների գլխաւոր նպատակն է, որ ամեն մի ազատ մտածող անհատ հարկաւոր ժամանակ կարողանայ ընկերութիւնից օգնութիւն և պաշտպանութիւն գտնել և մանաւանդ երբ մէկը իր ազատ համոզմունքի ու խղճի իրաւունքը պաշտպանելու պատճառով նիւթական կարօտութեան մէջ կը լինի։ Այդ նպատակին հասնելու համար հարկաւոր համարվեցան ընկերութեան կողմից հետևեալ միջոցներ.—1) աշխատել ինչքան կարելի է մամուլի և հրապարակական դասախօսութիւնների միջոցով ազատ դաղափարներ տարածել հասարակութեան մէջ. 2) ամեն տարի ընկերութիւնը պէտք է մի ընդհանուր ժողով ունենայ հետևեալ տարվայ գործունէութեան պրօգրամը կազմելու և մի քանի ընդհանուր տեսական հարցերը պարզելու համար. 3) հիմնել նոր ճիւղեր ամեն տեղ ուր հնարաւոր կը լինի. 4) նպաստել ընկերութեան անդամների մէջ անձնական յարաբերութիւնների հաստատելուն և աշխատել կապեր կապել ընկերութեան դաղափարին համախոհ և առհասարակ ազատ մտածող անձինքների հետ. 5) հիմնել ընկերութեան մի առանձին դրամարկղ։ Իբրև օրգան այդ ընկերութեան առայժմ ընտրված է կիրակնօրեայ թերթ «Մարդկութիւն» վերնագրով, որ հրատարակվում է Գօթայում, այդ ընկերութեան անդամ դոկտոր Շպէխտի խմբագրութեամբ, միայն ժողովը հրաժարվում է ընդունել իր պատասխանատուութեան տակ թերթի ամբողջ պարունակութիւնը։

Գերմանական ազատ մտածողների ընկերութիւնը կապ ունի և այն միջազգային ընկերութեան հետ, որը հիմնվեցաւ անցեալ տարի օգոստոս ամսին Բրիւսսելում։ Գերմանական ընկերութիւնը վճռեց միջազգային ընկերութեան ընդհանուր ժողովներին երկու պատգամաւորներ ուղարկել իր կողմից, քանի որ նրա բռնած ընթացքը չէ հակառակում գերմանական օրէնքներին։ Երկու պատգամաւորներ նոյն օրը ընտրվեցան միաժամանակ ընթացող գործերը կատարող մանաժողովի անդամների հետ։

Սխալ կը լիներ կարծել որ այդ ժողովը աչքի առաջ ունի միայն հակակրօնական նպատակներ. ժողովը ոչ մի իր անդամից չէ պահանջում որ նա իր բոլոր կապերը խզէ եկեղեցուց և կրօնից. ընկերութեան դրօշակն է՝ կարծիքների ազատութիւնը, այդ բառի ամենընդարձակ նշանակութեամբ, թէև նա նախապատուում է հետևել ամեն բանում բուն գիտական տեսակէտին։ Այդ հիման վրա ժողովը հարկաւոր համարեց յայտնել իր համակրութիւնը անգլիական պարլամենտի անդամ Բրէդլոյին, ճանաչելով պարլամենտական երդման հարցի մասին նրա յարուցած բանակռուի նշանակութիւնը և առաջարկել նրան ամեն տեսակ օգնութիւն ընկերութեան կողմից, հրաւիրելով նրան տոկունութեամբ շարունակել այդ բանակռիւը, որից անշուշտ նա յաղթող պիտի հանդիսանայ։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿՆԵՐԸ

—

Կ. Պոլսի «Լոյս» լրագիրը հաղորդում է որ Հասունեան և Հակահասունեան Հայ-կաթողիկների մէջ Ազարեան եպիսկոպոսի շնորհով միութիւն է կայանում։ Արդէն միութեան գլխաւոր սկզբունքների վրա համաձայնութիւն է կայացել այդ երկու կրօնական բաժինների մէջ։ Ահա ինչ է աւելացնում «Լոյս» լրագիրը։

«Բաղձալի է որ Հասունեան և Հակահասունեան խնդիրը բոլորովին վերջանայ և մեր համազգի երկու կուսակցութիւն դարձեալ միանալով՝ ձեռք ձեռքի տան և իրենց բոլոր ջանքն ու զօրութիւնը միայն յօգուտ ազգին նուիրեն և դարմանեն այն մեծամեծ վնասներն՝ որ կուսակցական ամուլ վէճերու պատճառաւ յառաջ եկան։

«Այժմ քանի որ սկզբան և ազգային իրաւանց վերաբերեալ խնդիր չի կայ, վասն զի վէճի նիւթ եղող խնդիրները լուծուած և Հռոմայ Ս. Պապն ալ իւր հաւանութիւնն յայտնած է, բաժանեալ մնալու և վերստին չի միանալու պատճառ մը չի կայ։ Եթէ բան մը կայ, այն ալ անցեալը մոռնալ և այսուհետև իրարու հետ սիրով և միաբանութեամբ վարուելով՝ յօգուտ ազգի աշխատելու պարտաւորութիւնն է միայն, որմէ ոչ ոք կրնայ ինքզինք ազատ նկատել։

«Գոհ եմք որ Հասունեան պատուարժան ազգայնոց մէջ ալ ազգային միութեան դաղափարն յառաջադիմութիւն ըրած է և շատեր համոզուած են արդէն թէ կրօնի տարբերութիւնը բնաւ պատճառ մը չէ ազգային միութեան շրջանակէ դուրս ապրելու։

«Թերձէմանը—էֆքեար» լրագիրն այս դաղափարը տարածելու կրցաւ մեծապէս նպաստել։ որ հարկաւ փոքր ծառայութիւն մը չէ, մանաւանդ այսպիսի ժամանակ մը՝ ուր մեր ազգային շահերը բնաւ տարբեր չեն, և ուր ամեն ժամանակէ աւելի այժմ ազգային միութիւնը խիստ օգտակար է և կարևոր։»

ՅՈՒՆԱՍՏԱՆ

—

Ամէնքից լրագիրներին հաղորդում են հետևեալը։ Յունաստանի և Թիւրքիայի համաձայնութիւնը Կ. Պոլսի կոնֆերենցիայի մշակած հիմունքների վրա անկասկածելի կարելի է համարել։ Առաջին լուրը մեծ պետութիւնների դեսպաններից առաջարկված պայմանների մասին ծանր տպաւորութիւն գործեց յունական բարձր շրջանների մէջ և քիչ էր մնում առիթ տար քաղաքական նշանաւոր փոփոխութիւններին, բայց վերջը այդ պայմանները բաւականացուցիչ համարվեցան։ Կրիտ կղզին, ինչպէս յայտնի է, Թիւրքաց տիրապետութեան տակ է մնում։ Այդ կղզու քրիստոնեայ ազգաբնակութիւնը չափազանց վրդովված է կոնֆերենցիայի վճռի պատճառով։ Վերջին ժամանակներում կղզիաբնակ քրիստոնեաները հաւատացած էին, որ Կրիտը անպատճառ կը միանայ Յունաստանի հետ։ Եւրոպական հիւպատոսներին բազմաթիւ ստորագրութիւններով ծածկված շնորհակալութեան գրութիւններ էին ներկայացնում, յուսալով, որ կղզին վերջապէս կազատվի Թիւրքաց

թեամբ ձեռքերով չոչափում էր այդ մահաբեր մթերքը, որից ամեն մի եկեղեցական սարսափում է։—Օրհնեա՛լ լինիս, Խորէն հայր սուրբ, ասաց նա դառնալով դէպի երիտասարդ աբեղան։—Շատ համեղ է, անչափ շատ համեղ...

Յետոյ նա կողպեց ստորերկրեայ մառանի դուռը, բալանին դրեց գրպանը, և դիմեց իր խուցը, Խորէն հայր սուրբին ևս իր մօտ հրաւիրելով։

—Ես այս բոպէիս կը գամ ձեզ մօտ, սրբազան, ասաց նա գնալով դէպի իր խուցը.—ինձ պէտք է առաջ հագուստս փոխել։

Խորէն հայր սուրբը բոլորովին նորընծայ, երիտասարդ աբեղայ էր, միջակ հասակով և բաւական նուրբ կազմուածքով։ Նրա գեղեցիկ դէմքը կնոջ դէմքի քնքոյշ արտայայտութիւնն ունէր, թէև այժմ բաւական այրվել էր արևից, որովհետև մի քանի ամբողջ չաբաթներ ճանապարհորդում էր։ Մտնելով իր խուցը, նա արձակեց զէնքերը, մի կողմ դրեց, յետոյ սկսեց մերկանալ հագուստը, որի մէջ չիրվանաձորցի բեռնակիր գիւղացու էր նմանում։ Վանքի ծառաներից մէկը ջուր բերեց լուացվելու համար։ Երբ նա չապկի թեքերը ծալած լուացվում էր, այդ ժամանակ կարելի էր նկատել նրա սպիտակ պարանոցի վրա, ետևի կողմից, մի վարդագոյն սպի, որ առաջ էր եկած սրի հարուածից։ Այդ սպին կրում էր նա այն ժամանակից, երբ դեռ իրան չէր նուիրել կուսակրօնութեան։ Այդ սպիի հետ կապված էր նրա կեանքի ամենատխուր պատմութիւններից մէկը...

Նա հագաւ իր վանականի հագուստը և դիմեց սրբազանի խուցը։ Անցնելով վանքի մօտից, նկատեց, որ առաւօտեան ժամերգութիւնը դեռ աւարտված չէր։ Ներս չը մտաւ, միայն համբուրեց վանքի դուռը, երեսը խաչակնքեց և անցաւ։

—Նստիր, Խորէն հայր սուրբ, ասաց սրբազանը, նրան տեղ ցոյց տալով փոքրիկ տախտի վրա, որ դրած էր նրա խցում և ծածկած պարսկական գորգով։ Իսկ ինքը տեղաւորվեցաւ դրասեղանի հանդէպ, որի վրա դիզած էր թղթերի մի կոյտ։ Ամբողջ գիշերը նա անքուն էր մնացել և գրել էր այդ թղթերը։ Այժմ մէկ-մէկ վեր էր առնում, խնամքով ծալում էր, և նրանց նամակի ձև տալով, կնքում էր, գրում էր հասցէները։ Նա դարձաւ դէպի վարդապետը ասելով.

—Խորէն հայր սուրբ, այս նամակները հէնց այս առաւօտ պէտք է ուղարկվեն, աշխատեցէք մեր ծառաներից այնպիսիներին ընտրել տանելու համար, որ համ սրտումը քաջութիւն ունենայ, համ գլխումը խելք։

Վարդապետը նայեց հասցէներին, նամակները գրված էին Սիւնեաց աշխարհի նշանաւոր իշխանների և մելիքների անուններով։

—Դուք արդէն հրաւիրում էք նրանց, հարցրեց վարդապետը հետաքրքրութեամբ։

—Հրաւիրում եմ... «բէկը» արդէն յայտնվել է... պատասխանեց սրբազանը։

Այս խօսքը այն ասոյճան ուրախութիւն ազդեց երիտասարդ աբեղայի մէջ, որքան չէր ուրախանայ մի բարեպաշտ իսրայէլացի, եթէ նրան ասէին. «Մեսիան յայտնվել է, որ պիտի վերանորոգէ քանդված Երուսաղէմը և պիտի վերականգնէ Դաւթի թագաւորութիւնը»։

—Այս դիշեր լաւ տեղեկութիւններ ստացայ, Խորէն հայր սուրբ, բէկը հասել է արդէն Սիսիան. այնտեղ Ուչ-թէփէի դաշտավայրի վրա զարկել է Կարա-չօռլուների ցեղը. մեծ յաղթութիւն է գործել. ամբողջ Սիսիանը սարսափի մէջ է. թիւրքերը թողնելով իրանց գիւղերը, փախչում են դէպի լեռները։ Ցեղացի հայերը տեսնելով բէկի փառաւոր յաղթութիւնը, հաւաքվում են նրա դրօշի տակ։ Այժմ մօտ 500 ձիաւոր ունի, բոլորը ամենաքնարիր տղամարդիկ։ Բայց դիտէք քանի հոգով կատարեց նա իր առաջին յաղթութիւնը,—իր հետ Վրաստանից բերած քառասուն հոգով։

—Այդ հրաշք է, կատարեալ հրաշք, բացականչեց երիտասարդ աբեղան և ուրախութիւնից չը գիտէր ինչ անել։

—Այո՛, հրաշք է, և մի այդպիսի հրաշք պէտք էր։ Կոյր ժողովուրդը միշտ հրաշք է պահանջում. նա սեպհական հաւատ չունի։ Ցիսուս Քրիստոսը քանի որ խօսքերով էր քարոզում, ոչ ոք չէր լսում, բայց երբ սկսեց հրաշքներ գործել, ժողովուրդը հետևեց նրան։ Այսպէս էլ բէկը իր հետևողները ունեցաւ. յաղթութեան հէնց միւս օրը հաւաքվեցան նրա մօտ աւելի քան չորս հարիւր ձիաւորներ։

—Այդ տեղեկութիւնները ումից ստացաք։

—Իշխան Ստեփաննոս Շահումեանից։ Կարող էք կարդալ նրա նամակը, որ ստացայ բանակից։ Սրբազանը տուեց նրան մի նամակ, որ գրված էր չտպ ձեռքով։

Նամակի մէջ նկարագրված էր Ուչ-թէփէի արշաւանքի մանրամասները, թէ ինչպէս բէկը զիշերով յանկարծ յարձակում գործեց Կարա-չօռլուների վրա, և որպէս նրանք խառնութեան մէջ ընկան, կարծելով, թէ զօրքերի ահագին բազմութեան հետ գործ ունեն, այդ պատճառով մեծ մասը իրանց չադրները ու անասունները թողնելով փախան, իսկ նրանք որ ընդդիմադրութիւն գործեցին, սատկեց ջարդվեցան։ Իշխանը իր նամակը վերջացնում էր, հրաւիրելով սրբազանին բէկի մօտ մի քանի կարևոր կարգադրութիւնների մասին խորհրդակցելու համար։

—Ուրեմն դուք պէտք է գնա՛ք, հարցրեց Խորէն հայր սուրբը նամակը կարդալուց յետոյ։

—Ես պատրաստվում եմ իսկոյն ճանապարհ ընկնել, պատասխանեց սրբազանը։—Նոր և աւելի ուրախալի համբաւ ևս կը հաղորդեմ ձեզ՝ Շընհէրը *) գրաւված է բէկի կամաւորներով։

—Շընհէրը... մթթէ, երբ... հարցրեց հայր սուրբը, դժուարանալով հաւատալ իր ականջներին։

—Ուչ-թէփէի արշաւանքից յետոյ, երբ բէկի յաղթութեան լուրը տարածվում է Սիսիանի մէջ, ինչպէս ասեցի ձեզ, հաւաքվում են նրա մօտ աւելի քան չորս հարիւր կամաւորներ։ Դրանցից շատերը զէնք և ձիաներ չեն ունենում։ Բէկը զինւորում է նրանց Կարա-չօռլուներից խլած աւարով, և առանց ժամանակ կորցնելու, սկսում է դիմել դէպի Շընհէր։ Շընհէրը առանց կռիւի անձնատուր է լինում և տեղային հայերը միանում են բէկի հետ։ Նրա ուժերը այժմ աւելի զօրութիւն են ստանում, մանաւանդ երբ բէկը զարկում է շրջակայ այլազգիներին և նրանցից խլած զէնքերը բաժանում է իր նոր կամաւորներին։

—Այդ լաւ է, հայր սուրբը ծիծաղելով ընդհատեց սրբազանի պատմութիւնը.—թշնամիներից խլել և իր կամաւորներին զինաւորել։ Այսպիսով բէկը մեծ ծախսեր չի ունենայ։

—Այսպէս էլ պէտք է, պատասխանեց սրբազանը.—մթթէ պարսիկները մեզ հետ մի և նոյն

*) Շընհէրը կոչվում է և Շինուհայր, այսինքն շէնների կամ աւանների հայրը. դա գիւղաքաղաք էր Ղափանի մէջ։

անտանելի լծից։ Այդ զրութիւններից յետոյ, պատգամաւորութիւն ընտրվեցաւ, որի անդամները քաղաքապետներն էին։ Այդ պատգամաւորութիւնը հեռագրով շնորհակալութիւն յայտնեց կոնֆերենցիային կըղզու վիճակի մասին հոգալու համար։ Այնուհետև պատգամաւորութիւնը հեռագիրներ ուղարկեց այն պետութիւններին, որոնց ներկայացուցիչները մասնակցում էին կոնֆերենցիային։ Այդ հեռագիրների մէջ ուրախութիւն էր յայտնում կղզին Յունաստանի հետ միացնելու պատճառով և հաւատացնվում էր, որ դա միակ միջոց է Կրիտի ազգաբնակութիւնը տանջանքներից ազատելու և անդադար կրկնվող արիւնհեղութեան առաջն առնելու համար։

Նշանաւոր է այն հանգամանքը, որ այդ ցոյցերին մասնակցում էին Թիւրքաց ծառայութեան մէջ պաշտօնական դիրքեր ունեցող անձինք։ Նրանց մէջ եղել են գլխաւոր նահանգապետի մի քանի խորհրդատուներ։ Բ. Դուռը նախատել է նահանգապետին այդ ցոյցերը թոյլ տալու համար։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Վան, մարտի 26. 1881

Թիւրքաց կառավարութիւնը ռուսօ-թիւրք սահմանագլուխները սաստիկ խստութիւններ կը բանեցուցնէ Ռուսաստանէն եկողներու վրայ, իբր թէ թշնամի տերութեան մը երկրէն կը գան նոքա։ Ռուսահայաստանի սահմանակից ամեն գիւղերն զօրքեր դրած է որք երբ Ռուսաստանէն եկող մի մարդ տեսնեն, մինչև անգամ թէ անցագիր ալ ունենայ, խուզարկութեան և քննութեան կենթարկեն։ Մի քանի անձեր անտեղի կասկածներով բանտարկած են։ Սահմանագլուխներուն վրայ եղած այս ապօրինի խստութիւններուն պատճառով, երկու տերութեանց ժողովուրդներուն մէջ առևտրական յարաբերութիւնները վտանգուած են։ Այսպիսի դրութիւն մը ի հարկէ Ռուսաստանի պէս մի բարեկամ տերութեան շահերուն կը դիպչի։ Որչափ վաճառքներ կան որ Ռուսահայաստանէն դէպի Վան և փոխադարձապէս կրնան փոխադրուիլ, բայց սահմանագլուխներն ապահովութիւն չը լինելուն համար՝ կարծես թէ մի չնչին պատ քաշուած կայ մէջտեղ և իրարէ երեք օր հեռու բնակվող Իգդիրի և Վանի ժողովուրդները առևտուրի, փոստի և այլ ոևէ հաղորդակցութիւնէ զրկուած են։ Եթէ ուզէ վանցին մի նամակ յղել Ցփխիս, պէտք է որ Էրզրումի և Տրապիզոնի ճանապարհով յղէ որ գրեթէ մի ամիս կը տևէ, մինչդեռ Իգդիրի ճանապարհով կարող էր 6 օրէն յղել։ Վանի մէջ մի քանի գործարաններ բացուած են ուր բաւական աժան գներով չուխայներ կը շինուին և կրնան ծախվիլ Ռուսահայաստանի մէջ։ Նոյնպէս շիլայ ասուած կարմիր կտաւը, որ Պարսկաստանէն Ռուսաստան կը տանին կը ծախեն, Վանէն տանել աւելի աժան կը լինի. թէ լաւագոյն և թէ աժան տեսակներ կը շինեն այստեղ։ Վանի հարաւակողմը Շատախ գաւառին մէջ մի տեսակ ապա (բուրդէ հիւսուած) կը շինեն որմէ անձրև չը թափանցեր. այդ նիւթէն դիմացկուն, աժան և բարեձև հագուստներ կը շինուին և մինչև Կ. Պոլիս, Եգիպտոս, Եւրոպա կը զրկուի և կը ծախուի, բայց մեր դրացի ռուսաց տէրութեան երկիրը չը զրկուիր։ Գինն ալ շատ աժան է. մի ծրարը որ 9 կամ 10 կանգուն (գրեթէ $7^1/_2$ մէթր) կը լինի, 9 ռուբլ թղթադրամի կը ծախուի ամենալաւ տեսակը։ Սորա աւելի լաւ տեսակը մի նուրբ կտաւէ շինուած կայ որ Վանի շալ կը կոչուի և թերևս երբեմն այդ կողմեր տեսած կը լինիք հարուստ եպիսկոպոսներու վրա որ անկէ վերարկու կը շինեն. ընդհանրապէս մանիշակագոյն կը լինի և վրան ալէծածան գիծեր կը գտնուին։ Սորա մի ծրարը որ 20 կանգուն կը լինի, կարժէ 18 ռուբլ թղթադրամ երբ ամենալաւ տեսակէն լինի։ Աղուէսի մուշտակն զոր այստեղէն կը ժողվեն կը տանեն Պարսկաստան և այնտեղէ ալ կը տանեն Ռուսաստան կը ծախեն, այստեղէն ուղղակի Ռուսաստան տանելն աւելի շահաբեր կը լինի. հատը 6 քսակէկէն մինչև 1 ռուբլ 50 կոպէկ կը ծախուի այստեղ, մորթի տեսակին և ժողվելու ժամանակին համեմատ։ Տառեխ ձուկն շատ ժամանակ այնչափ առատ կը լինի որ 100 հատը կը ծախուի 10 կոպէկ. կաղեն զայն և ամբողջ տարի պահելով կուտեն։ Ձագուց մեղր որ պատուական մեղր է և Շատախի կողմէն կը բերուի, հոխան (3 ֆունտ) կը ծախուի 40 կոպէկ, սովորական տարիներն։ Եւ այլն բազմաթիւ վաճառքներ կարելի է արտածել Վանէն Ռուսահայաստան։ Շաքարին հոխան (3 ֆունտ) 1 ռուբլ կը ծախուի այստեղ և Կ. Պոլիսէն կը բերուի, մինչդեռ ձեր կողմը ֆունտը 20 կոպէկ կարժէ, կարծեմ, մաշինով կոտրած շաքարը։ Այստեղ ամենատոր տեսակ թէյի ֆունտը կարժէ 2 ռուբլ. ոչ թէյի հոտը, ոչ գոյնը, ոչ համը ունի։ Ռուսաստանէն կը յղեն Կ. Պոլիս և այնտեղէ ալ Վան, մինչդեռ Իգդիրի այստեղ 3—4 օրուան ճանապարհ է։ Մի ինքնաեռ (սամովար) որ 10—12 ռուբլ կարժէ ձեզ մօտ, երբ մի մարդ ուզէ գնել այստեղ, 25 ռուբլ պէտք է վճարէ, եթէ երբէք գտնէ։ Այդ թանգութեան պատճառը յայտնի է, որովհետև այդ վաճառքներ Ռուսաստանէն Կ. Պոլիս և այնտեղէ ալ մինչև Վան երկար ճանապարհորդութիւններ կանեն, փոխանակ ուղիղ և կարճ ճանապարհով բերուելու, նոյնպէս բէվօլվերներ, կաշեղէններ, օճառ, կոշկաներկ (վաքսա), կարտոֆիլ, մօտ, լաւ տեսակ չուխայներ և այլն կարելի է բերել ծախել այստեղ։

Կը լսեմք թէ տեղւոյս ռուսական դեր-հիւպատոս վսեմ. պ. Կամսարական առաջարկած է ռուսաց տէրութեան որ Իգդիրէն մինչև այստեղ ռուսական փօստ հաստատուի և 14 զաղախներ յատկացուին այդ պաշտօնի։ Եթէ այս առաջարկութիւնն գործադրուի, մեր յարաբերութիւն ձեզ հետ աւելի կը դիւրանայ քան թէ Կ. Պոլսի հետ։ Շատ ուրախ ենք որ պ. Կամսարական այստեղի ժողովրդեան առևտրական յառաջադիմութեանը համար այսպիսի միջոցներ կը խորհի. եթէ թիւրք պաշտօնեայներուն մնայ, նոքա հարստահարելէն ուրիշ բան չը գիտեն։

Մոկաց գայմագամին վրայ այնպիսի սարսափելի բաներ կը պատմեն որ մարդ լսած ժամանակ կը քստմնի։ Զմեռ ժամանակ կիներու և աղջիկներու չալակը բեռներ կապած աշխատցուցեր է, ձիւներու վրայ ճանապարհորդել տալով կիսամերկ և բոկոտն վիճակի մէջ. մի քանի օրիորդներու ոտքերը սառեր մնացեր են ճանապարհին վրայ, մի քանի կիներ վիժեր են։ Իրեն ընդդիմացողները ծեծել բանտարկել տուեր է։ Մի խումբ մոկացիներ եկած այստեղ բողոքեցին նահանգապետ փաշային. բայց բողոքի կարեւորութիւն չը տուին։ Կառավարութիւնը սիստեմատիկ կերպով կաշխատի ճնշել այստեղի հայ տարրը և ոչ միայն Հայաստան անունը, այլ և հայ անունը կուզէ ջնջել աշխարհի երեսէն։

Քուրդեր ամեն ժամանակ կը կողոպտեն կը սպաննեն հայերը, բայց անպատիժ կը մնան։ Երբ մի հայ ուզէ ինքզինք պաշտպանել քուրդի կամ թուրքի դէմ, կը պատժուի և կը բանտարկուի, թէև բարձրաստիճան մի անձ լինի այդ հայը։ Բաշկալայի առաջնորդ գեր. Յովհաննէս վարդապետ Բաշունի 6 ամիսի չափ յառաջ երկու ընկերներով գնացած էր դիմաւորել Բաշկալայի միթէսարրիֆը որ իւր վիճակին այցելութիւն արած կը դառնար Բաշկալա։ Վարդապետը իւր ընկերներով Աղբակի Յ. Բարթուղիմէոս վանքը վերադարձած ժամանակ, քուրդեր կը յարձակին սոցա վրայ. վարդապետը որ լաւ գիտէ հրացան ձգել, մի քարի ետև անցնելով կը պաշտպանէ զինք և իւր ընկերներ։ Այս կռուին մէջ քուրդերէն մին կը մեռնի։ Վեց ամիսներ անցած էին այդ ժամանակէն ի վեր, վարդապետին անմեղութիւնը ճանչուած էր, բայց ահա յանկարծ վարդապետը զօրքերով շրջապատած Աղբակէն բերին Վան և բանտարկեցին։ Անգլիական և ռուսական դեր-հիւպատոսները նահանգապետ փաշային բողոքեցին այս անիրաւութեան համար և վարդապետը 2 շաբաթի չափ բանտը մնալէ յետոյ արձակուեցաւ։ Մինչև այժմ աչ թէ մի վիճակի առաջնորդ, այլ մինչև անգամ մի քահանայ չէր բանտարկուեր կառավարութեան բանտին մէջ. յանցաւոր կղերականը կը զրկուեր մեր առաջնորդարան և այնտեղ հսկողութեան տակ կը դրուեր։ Այժմ որ Հայաստանի բարեկարգութեան խնդիր կայ մէջտեղ և իբր թէ աւելի ընդարձակ իրաւունքներ պիտի արուին մեզ, մեր արդէն ունեցած իրաւունքներ ևս կը խլուին մեր ձեռքէ։

Աղբակցի մի պանդուխտ հայ որ երկար տարիներ Կ. Պոլիս պանդխտելով մի քիչ փող շահած կը դառնար իւր ընտանիքի մօտ, խոշապի մէջ քուրդեր կողոպտեր և սպաններ են։ Պանդուղը յայտնի անձ է, բայց ազատ թողուած է, որովհետև քիւրդ է. բայց Աղբակի առաջնորդ Յովհաննէս վարդապետը, որ զինք պաշտպանած էր, բանտարկուեցաւ որովհետև հայ է։

Մուշի Ալվառնչ գիւղացիները, որք զիրենք բռնաբարող և ծեծող գիւղացիներուն դէմ զիրենք պաշտպանելու անհրաժեշտ ոճիրը գործած էին և պ. Կամսարական այդ միջոցին Մուշ գտնուելով գիւղացւոց իրաւունքը պաշտպանած էր, այժմ կը լսենք որ սաստիկ տանջանքներու ենթարկուեր են։ Մի քանին մեռեր են իրենց բերանը աղբով և քարով ծեփուած. մի քանին սուլիներով վիրաւորուեր են։ Մի կին իւր երեխայն վիժելով և մի ուրիշ կին չարաչար բռնաբարուելով մեռեր են...։ Թող սոցա անմեղ արիւն բողոքէ երկնից առջև եթէ այդ կերպով թափուած արիւնները ընդունելի կը լինին...։

Թիւրքաց մէջ շատ տարածուած է որ իբր թէ հայեր խորհուրդ արած են մի ուրբաթ օր թուրքեր մէջիդէն դուրս ելնելու ժամանակ զանոնք կոտորել։ Այսպիսի մի անհիմն զրպարտութիւններով կուզեն հայերը ճնշել և չը թողուլ որ զէնք կրեն։ Կառավարութիւնը անուղղակի միջոցներով փակել տուաւ Այգեստանի կլուբը, ուր հայ երիտասարդներ կը հաւաքվէին։

Շէյխ Իբադուլլահ ամեն կողմ նամակներ կը գրէ քուրդ գլխաւորներուն. բայց կերևի որ սոքա կը զգուշանան իւր հետ միանալէ, աչքի առջև ունենալով իրենց տկարութիւնը։ Միւս կողմէն, կասեն թէ պարսից կառավարութիւնը 20,000 զօրք հաւաքած է թուրքо-պարսկական սահմանագլուխը։

Շարունակվի

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

կերպով չէին վարվում։ Մեր փողը, մեր կայքը, մեր զէնքերը խլում էին, իրանց համար ասպատակներ էին պատրաստում ու յետ դառնում կրկին մեզ կողոպտում, կրկին մեր զէնքերով մեր արիւնն էին թափում։ «Ակն ընդ ակն, ատամն ընդ ատամն»—այդ օրէնք է, և բէկը խիստ խելացի կերպով է վարվում, որ հետևում է այդ օրէնքին։

—Բայց նոր առակ լուարուք, խորէն հայր սուրբ, շարունակեց սրբազանը։—Շընհէրը գրաւելուց յետոյ և չրջակայ այլազգիներին ջարդելուց յետոյ, պարսիկների Զուանչիր կոչված ցեղը, որ շատ հեռու չեն այնտեղից, լսում են բէկի յաղթութիւնները և կատաղում են։ Ցան և վեց հազար հոգով դրանք գալիս են բէկի վրա։ Կռիւը տևում է երկու ամբողջ օր և երկու ամբողջ գիշեր, վերջը Զուանչիրները յաղթվում են, և թողնելով պատերազմի դաշտում ահագին աւար, սկսում են փախչել։ Զուանչիրներին օգնութեան են հասնում Կուրթլար աւանի պարսիկները։ Բէկը ուղարկում է նրանց դէմ Մխիթար սպարապետին և հրամայում է բոլորովին ոչնչացնել այդ աւանը։ Այժմ Կուրթլարը ներկայացնում է մոխիրի ահագին կոյտ միայն, իսկ բնակիչներին սրից անց է կացրած։

—Այդ, եթէ չասեմ անգթութիւն է, բայց փոքր ինչ խիստ է, նկատեց հայր սուրբը։

—Դուք սխալվում էք, խորէն հայր սուրբ, պատասխանեց սրբազանը։—Բէկի սկսած գործի յաջողութեան ամենագլխաւոր պայմանը ոչ թէ նրա յաղթութիւնները կարող են լինել, այլ այն սարսափը, որ նա կը տարածէ թշնամիների վրա։ Իսկ թշնամուն սարսափի մէջ ձգելու համար, գոնէ սկզբում, այս տեսակ անգթութիւններ պէտք են։ Եւ բէկը այդ անհրաժեշտութիւնը չատ լաւ է հասկանում։ Գազանների հետ բարեսրտութեամբ ոչինչ չես կարող շինել։

—Մի բան էլ կայ, առաջ տարաւ սրբազանը.—բէկի այս տեսակ գործողութիւնները ոչ միայն մեծ սարսափ կը տարածեն մահմեդականների վրա, այլ սաստիկ ազդեցութիւն կունենան նոյն իսկ հայերի վրա, որոնք առանց առաջնորդի, առանց ուղեցոյցի միշտ դժուարանում են գտնել ուղիղ և անմոլոր ճանապարհը։ Նա իր յաղթութիւններով նպաստեց և մեր նպատակներին։ Ես մեծ վստահութիւն չէի ունենալ, թէ իմ նամակներով, թէ իմ հրաւէրքով հայոց իշխանները կը հաւաքվէին այստեղ և կը միանային բէկի հետ, եթէ նա այդ հրաշքները գործած չը լինէր։ Համարեա մէկ շաբաթվայ մէջ նա կատարեց չորս փառաւոր յաղթութիւններ, ինչպէս են՝ Ուշ-թէփէի, Շընհէրի, Զուանչիրների և Կուրթլարի ճակատամարտը, և այդ բոլորը սկսեց նա քառասուն հոգով։

—Վերջին տեղեկութիւնները նոյնպէս Սանփաննոս իշխանն է հաղորդել ձեզ, սրբազան, հարցրեց խորէն հայր սուրբը։

—Նա է հաղորդել։—Բայց մենք ուշանում ենք, խորէն հայր սուրբ, խօսքը փոխեց սրբազանը, նամակների ծրարները գրասեղանի վրայից առնելով և նրան տալով։—Այս նամակները հէնց այս առաւօտ պէտք է ուղարկվեն։ Շուտով կը կատարվի սուրբ Վարդանանց նահատակների հոգեհանգիստը։ Ես իմ նամակների մէջ նշանակել եմ, որ այդ հանդիսաւոր տօնին բոլորը այստեղ գտնվեն, որպէս զի այդ խորհրդաւոր օրում կնքվի և խորհրդաւոր գործի ուխտը։

—Նամակները ես ինքս կը տանեմ, ասաց խորէն հայր սուրբը։

—Դուք նոր եկաք ճանապարհից, բաւական յոգնած կը լինէք, պատասխանեց սրբազանը։

—Ձեր հաղորդած ուրախալի տեղեկութիւնները բոլորովին կազդուրեցին իմ յոգնածութիւնը։ Այդ նամակների հետ նշանակութիւն ունի և կենդանի խօսքը։ Թոյլ տուեցէք, սրբազան, որ այդ ցանկալի դեսպանախօսութիւնը ես կատարեմ։

—Օրհնեալ լինիք, որդի, ասաց սրբազանը։ Իսկ խորէն հայր սուրբը, առնելով նամակների ծրարները, համբուրեց իր մեծաւորի աջը և հեռացաւ։

Արեգակը արդէն ծագել էր։ Վանքի ծառազարդ շրջակայքը վառվում էին առաջին ճառագայթների ջերմ լուսով։ Առաւօտեան ժամերգութիւնը աւարտված էր։ Վանքի բազմաթիւ միաբանները դուրս գալով Աստուծոյ տնից, այլ ևս իրանց սովորութեան համեմատ չէին նստած բակի ծառերի հովանիների տակ և ժամանակը սպանում դատարկ չատախօսութիւններով, կամ բամբասանքով։ Նրանք առանձնացել էին իրանց մըթին խցերում, ինչ որ գործով լուռ ու մունջ զբաղված էին։ Եթէ մէկը աներևոյթ հոգու նըման մտնէր նրանց փակված խցերի դռնից, կը տեսներ, որ այս սաղմոս և նարեկ կարդացող, ծոյլ մարդիկը, նստած իրանց մենարանների խուլ դաղտնարանում, վառօդից և գնդակներից փամփուշտներ են շինում։

Այդ միջոցին վանքի ախոռապետ հայր սուրբը ներս մտաւ սրբազանի սենեակը, յայտնեց, թէ ձիաները պատրաստ են։

—Իսկ թուանքչիները (հրացանաւորները) նոյնպէս պատրաստ են, հարցրեց սրբազանը։

—Պատրաստ են, որպէս հրամայեցիք, տասն և երկու ձիաւորներ։

—Լաւ, ես այս րոպէիս դուրս կը գամ, կանչեցէք լինձ մօտ Մեսրոպ սրբազանին։

Ախոռապետ հայր սուրբը հեռացաւ։ Քանի րոպէից յետոյ ներս մտաւ մի ծերունի եպիսկոպոս, սպիտակ, փառաւոր մօրուքով։ Դա սրբազանի տեղապահը և վանքի կառավարիչն էր նրա բացակայութեան ժամանակ։

—Հայր Մեսրոպ, ասաց նրան սրբազանը կանգնելով և պատրաստվելով ճանապարհի համար,—ես այս րոպէիս գնում եմ Շընհէր՝ բէկի հետ տեսնվելու, դուք, ի հարկէ, գիտէք, թէ ինչ կարգադրութիւններ պիտի անէք իմ գնալուց յետոյ։ Մենք երէկ բաւական խօսեցինք այդ մասին։

—Գիտեմ... պատասխանեց Մեսրոպ եպիսկոպոսը.—իմ ծերացած յիշողութիւնը դեռ այնքան չէ բթացել, որ մոռանամ, ընդհակառակն, այդ վերջին օրերում բաւական սրվել է...

—Գոնութիւն Աստուծոյ, ասաց սրբազանը ժպտելով, և տալով իր տեղապահին մի քանի նոր պատուէրներ, միասին դուրս եկան սենեակից։

Վանքի դրանը սպասում էին տասն և երկու զինված ձիաւորներ. այնտեղ պահած էր և սրբազանի երիվարը։ Նա դուրս եկաւ, երեսը խաչակնքելով, նստեց իր ձին և գնաց դէպի Շընհէր, բէկի բանակը։

Դա Տաթևի վանահայր, մի և նոյն ժամանակ Սիւնեաց աշխարհի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսն էր։*)

(Կը շարունակվի)

*) Այդ Ներսէս արքեպիսկոպոսին պէտք չէ շփոթել Գանձասարի Ներսէս եպիսկոպոսի հետ, որ այդ ժամանակ Աղուանից առաջնորդն էր։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПЯТАГО АПРѢЛЯ

ВЫШЕЛЪ ВЪ МОСКВѢ, ВЪ СВѢТЪ

РОСКОШНО ОТПЕЧАТАННЫЙ

ПОРТРЕТЪ

ГОСУДАРЯ ИМПЕРАТОРА

АЛЕКСАНДРА III.

Портретъ этотъ, въ натуральную величину, поясной, рисованный по послѣдней фотографіи нашимъ извѣстнымъ художникомъ К. В. Лебедевымъ, и отпечатанный нѣсколькими тонами подъ фотографію, на лучшей двойной портретной бумагѣ,—является превосходнымъ и необходимымъ украшеніемъ присутственныхъ мѣстъ, земскихъ управъ, городскихъ думъ, кабинетовъ, канцелярій, камеръ мировыхъ судей, классныхъ комнатъ въ учебныхъ заведеніяхъ, различнаго рода конторъ и т. д.

Издатель портрета, работы котораго не безъизвѣстный вѣроятно русской публикѣ, по участію его во многихъ художественныхъ періодическихъ изданіяхъ, употребитъ всю свою опытность и знаніе, чтобы портреты, исполняемые подъ его непосредственнымъ наблюденіемъ, дѣйствительно вышли роскошными.

Обращающіеся съ своими требованіями прямо въ контору изданія—Москва, Арбатская площадь, д. Звѣрева, типо-хромолитографія Ив. Ив. Клангъ—за пересылку не платятъ.

Цѣна портрету ТРИ рубля.

Гг. Книгопродавцамъ, а также всѣмъ выписывающимъ не менѣе 10 экземпляровъ, дѣлается обычная уступка. Кромѣ указанной конторы, портретъ выписывать можно и черезъ книжные и эстампные магазины, причемъ необходимо помѣчать: «Изданіе Клангa».

Գերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Սի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻԻԴ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաչափ դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

55—100

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է „Կենտրոնական“ և պ. Զ. Գրիգորեանցի „Կովկասեան“ գրավաճառանոցներում „Մասուր, ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին“ հեղ. Զօն Սաիւարտ Բլէկկի. թարգմ. Գրիգոր Շահբուդաղեանի. գինն է 60 կոպէկ։ Օտարաքաղաքացիք կարող են ուղղակի թարգմանչին դիմել այս հասցէով՝. Въ Тифлисъ, Учителю Армянской Духовной Семинарій Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцу.

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է թարգմանչի հետևեալ աշխատութիւնը. „Մայրական Դաստիարակութիւնը, բնութեան օրինաց վերայ հիմնուած“. հեղ. Ժ. Բամբուսսոնի։

ՎԱՃԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ կը ծախվեն. վարտիքներ 4 ր., ամբողջ հագուստ 14 ր. և աւելի, արիկո և պարուսինա 75 կ. արշինը։ Նոր ձևի հրացաններ 45. ր. 60 ր. և 100 ր., ռէվոլվերներ 4—40 ր., գլխարկներ 1 ր., թամբեր 30 ր. և աւելի, կօնեակ առաջին տեսակի 2 ր. շիշը, հին պօրտ-վէյն և խերես 1. ր. 40 կ., շամպայն գինի 3 ր., կոնֆեկտներ 35 կ. ֆունտը, շօկոլադ-ֆրայի 1 ր. 20կ. անգլ. ֆունտը և թէյ առանց թղթի 1 ր. 60 կ. ֆունտը, ամենալաւը Մոսկվայից 2 ր. 20 կ. թղթով։ **ՄԻԵԻՆ ՈՅՆ ՏԵՂԸ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ** մահճակալներ, մատուցարաններ, կողպէքներ, դանակներ, գդալներ, գրիչներ, թուղթ, կլէօնկա, ձիասանտր, վրձին, ամաններ, բաժակներ, մուրբաններ և այլն 30% աւելի էժան, քան թէ ուրիշ խանութներում։

9—15

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է „Կենտրօնական“ ու „Կովկասեան“ գրավաճառանոցներում **ՄՕԼԻԵՐԻ „ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՐԱՏ“, ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ։** Գինն է 30 կ։

ՄԻՆՉԵՒ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐՔԵՐԸ։

1) Երկու մանրավէպ. Ալֆոնս Դօդէից թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.

2). Պօղնանու ուսուցչի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան։ . . . . . 20 կ.

3). Պարապ ժամեր, ինքնուրոյն բանաստեղծութիւններ։ Ն. Տ. Աւետիքեան։ 25 կ.

4) Ճանապարհորդութիւն Ղարաբաղում, Արցախեցի։ . . . . . 30 կ.

5). Ծաղիկ և ծաղկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանցի։ . . . . . 15 կ.

6). Հնար խօսնակ, բանաստեղծութիւններ Ն. Տ. Աւետիքեան։ . . . 50 կ.

Այս վից գրքի գինն է միասին 1-50 կոպէկ։ Առանձին մէկի համար բաժանորդագրութիւն չէ ընդունվում, բացի „Հնար խօսնակից“ որի համար առանձին կարելի է առորագրել և մնացեալ հինգը առանձին։

Հրատարակիչ Տիգրան Յ. Նազարեան։

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեքէլի և հայելիների։

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են Կենտրոնական Գրավաճառանոցում։

1. Հայը և Հայաստանը օտարների աչքում, հրապարակական դասախօսութիւն ընթերցուած Թիֆլիսի ժողովարանում Աբգար Յովհաննիսեանի. Թիֆլիս, 1881 թ. գ. 30 կոպ.

2. Նոյն տեղը վաճառվում են։

Միութիւն Հայութեան, Բանախօսութիւն Մաղաքիայ Ծ. Վարդապետի Օրմանեան, արտասանեալ 'ի լսարանին կրթասիրաց ընկերութեան Յիւսկիւտար 'ի 17-ին Նոյեմբերի 1879 թ., Կ. Պոլիս գ. 45 կ.,

3. Տեղեկագրութիւնք ի փոքր և ի մեծ Հայս Հ. Ներսէսի Սարգսեան Մխիթարեան վարդապետի, Վենետիկ գ. 4 ր.

4. Ստորագրութիւն հին Հայաստանեայց Հ. Ղուկ. վարդ Ինճիճեան ի Մխիթարեան Միաբ. ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց ի Վենետիկ գ. 5 ր.

5. Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերդցիոյ, Վենետիկ գ. 1 ր. 50 կ.

6. Մեծին Գրիգորի Առաջնոյն Սրբոյ Քահանայապետի կանոն Հովուական, Վենետիկ գ. 1 ր. 50 կ.

7. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք և աղօթք, Վենետիկ գ. 2 ր.

8. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ Վենետիկ գ. 2 ր.

9. Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան Ուղղեփարութիւն յամի 1876 Արշակայ Մ. Արթունեան Ֆօքչան գ. 1 ր. 20 կ.

10. Սող. Կեսարի Քերթուած ի Մահն Աբելի, թարգմանեալ Տեառն Հ. Մանուելի Վ. Զախչախեան ի Մխիթարեան միաբանութիւնէ, Վենետիկ գ. 1 ր. 75 կ.

11. Առակք Մխիթարայ Գոշի, Վենետիկ գ. 1 ր.։

Նոյն տեղը ստացուել են մեծ քանակութեամբ Զատկի ոծներին նուիրելու զանազան հասակի մանկանց ընթերցանութեան համար փառակազմ գրքեր, ֆրեբելեան խաղեր, նկատողական ուսման պատկերներ և այլն։

Օտարաքաղաքացիք ճանապարհի ծախք են վճարում 10%, առանց փողի պաուէրները չեն կատարվում։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Համեմատեցէք թէյի-ֆունտը			1 ր. 5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ					ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	—		ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	—		ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	—		ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	—		ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	—		ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	—		ֆ. 3 ր.

70—100

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ։ Որովհետև այդ մագազինները ստանում է թէյ ուղղակի պանտատօրներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով։ Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաօ և շօկոլադ-ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, բէր վոլվէրներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թասքեր, գուլպաներ, կանանց և տղամարդկանց, թաշկինակներ-մակինտոշներ, կալենկոր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։ Արծրունու գալէրէում։ 100—85

ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ է ծրծիչ մեքենաներ 1 ր., ԲԱԺԱԿՆԵՐ 12 կ., ՋՐԱՄԱՆՆԵՐ 50 կ., հրացաններ 20—100 ր., ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ 5 կ. մինչև 5 ր., ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5—50 ր., ժիլետներ 75 կ., վարտիկներ 4 ր., ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ր., աղամարդկերանց 14 ր., ԳԼԽԱՐԿՆԵՐ 1 ռուբլ, մակինտոշներ 6 ր., հին պօրտվէյն և խերես 1 ր. 20 կ. շիշը, կօնիակ առաջին տեսակի 1 ր. 75 կ., ՊԻԿՈՒԼԻ 50 կ., թէյամաններ 25 կ., ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՑ 1 ր. 40 կ. առանց թղթի։ Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ԱԼԲՕՄՆԵՐ շատ էժան։ 1—15

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏՆԻ

☛ „ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱՋԸ“ ☚

անունով գիրքը, որ պարունակում է իր մէջ 90 դեռ լոյս չը տեսած բանաստեղծութիւններ։

Օտարաքաղաքացիք կանխիկ մէկ ռուբլ ուղարկելով, դիմում են ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով.

«Чрезъ Просковейское Почтовое отдѣленіе въ городѣ Святаго-Креста (Ставрапольс. губ.). Учителю Семену Сафаріанцу.»

Կ. և Զ. ՊՕՊՕՎ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ ԿՈՂՄԻՑ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ։ Ամենակարճ ժամանակամիջոցում մենք կը բանանք Թիֆլիսի մէջ մեր առևտրական տան թէյի վաճառումն մեծ քանակութեամբ և մաս մաս։ Խանութը կը լինի Գօլովինսկայա փողոցի վրա Միրիմանովի տանը։ Խանութը կը ստանայ **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ**, որ կշռված կը լինի Մոսկվայի մեր գլխաւոր խանութի մէջ մեր անձնական **ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ։** 2—5 (2)

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Апрѣля 1881 года. Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.